

Գ

ՏԵՍՈՒՉ

Հ. ՌԱՓԱՅԷԼ ԹՐԵԱՆՑ

1855 ՆՈՅՄԲ. 12 — 1858 ԴԵԿՏ. 9 (ՅՄԱՀ)

- ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ *Հ. ՏԻՄՈԹԷՈՍ ԹՆԿՐԵԱՆՑ՝ 1856 Մեկտեմբեր 11<sup>1</sup>.*
- ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ *Հ. ՔԵՐՈՎՐԷ ԻՖՐԱՉՃԵԱՆՑ<sup>2</sup> 1855 Մայիս 14 - 1860 Օգոստոս<sup>3</sup>.*
- ՄԱՏԱԿԱՐԱՐ *Հ. ԱՆԱՆԻԱ ՃԵԼԱԼԵԱՆՑ՝ 1858 Փետրուար 12.*
- ՈՒՍՈՒՑԻՉ *Հ. ՅԱԿՈԲՈՍ ԻՍԱՎԵՐՏԵՆՑ՝ 1856 Յունուար 2 - 1857 Դեկտեմբեր 10. - Հ. ՍՈՒՔԻԱՍ ՊԱՐՈՆԵԱՆ («Ռեկոլ»)՝ 1857 Յուլիս 29 - 1864 Յուլիս 10. - Հ. ՎԱՐԴԱՆ ՇԻՇՄԱՆԵԱՆՑ՝ շար. ց1857 Օգոստոս 12. - Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ՄԵՐՃԱՆՃԵԱՆՑ՝ 1858 Ապրիլ<sup>4</sup> - 1860 (ԸՅՂՖ. Ժող.).*
- ԱՇԽ. ԵՂՐԱՅՐ *ԵՂ. ԱՐՄԷՆ ԹՆԿՐԵԱՆՑ՝ 1855 Դեկտեմբեր 14(?). - Նոյմբ.՝ 1857 Յունուար 7 - 1857 Յուլիս 29. - ԵՂ. ՅՈՎԱԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆՑ՝ 1857 Յուլիս 29 - 1862 Յունուար 20.*

ԿԱՐԵՒՈՐ ԵՐԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Թրեանցի օրով - ինչպէս կ'երեւի - ազատ անձ չըլլալով՝ հոգեւէր ու եռանդուն տեսչին կը թողուի Հոգեւոր Հայրութեան ու Խոստովանահայրութեան փափուկ պաշտօնը եւս, մանաւանդ որ «մանկտին սիրով և համարձակ դիմէ առ տեսուչն, և թէպէտ միշտ յորդորէ նա զնոսա զնալ առ Վ. Հ. Յովհաննէս». (Նմկ. Գեղար. Եղ. Հիշում.ի առ Հիշում. Արք. Փարիզ 1857 Նոյեմբեր 8): Ասոր կը վկայեն իրենք իսկ աշակերտները, երբ Հ. Ռաֆայէլի մահուան առթիւ կը գրեն առ Հիւրմ. Աբբահայր իրենց ցաւակցականին մէջ, թէ «քաջ քան զայլսն ճանաչեմք թէ քանի նախանձախընդ դիր էր լաւութեան որդեկացս, զորոյ նման չէր մարթ թերեւս Աստուածապատիւ Սրբութեանդ գտանել և շնորհել մեզ զլաւագոյն պատկեր երկնաւոր սիրոյն Աստուծոյ, և բաշխիչ բարութեանցն». (գր. Փարիզ 1858 Դեկտեմբեր 11):

2. Յատուկ անուանում մը չիկայ, բայց ինքնին կը հասկցուի՝ երբ կը կարգուի «ի գործ և ի դասատուութիւն ի տեղի վտարելոցն». (Ժող. Արձ.):

3. Պաշտօնապէս կ'աւարտի 1858 Մայիս 15-ին, բայց երկար ատեն մը կը յետաձգուի մեկնումը՝ Հ. Ռաֆ.ի մահացու հիւանդութեան պատճառաւ, մանաւանդ թէ Հ. Ղեւոնդ Ալիշան եւս միեւնոյն պատճառաւ այդ վերջին ամիսները Փարիզ կը դրկուի՝ «սատար և օգնական». (Նմկ. Հիշում. Աբբահայր առ Աշակերտս Մ. Վ.ի, 1859 Փետր. 26), ինչ որ Թրեանցի մեծ գոհութիւն եղած էր այդ կարգադրութիւնը. առանց անոր պիտի տուժէր գործը՝ որոյ մասին շատ հոգածու գտնուած էր. այս պատճառաւ էր որ նախապէս ալ գրեք էր. «Յուսամ թէ Վ. Հ. Ղեւոնդ հաւանեսցի պահել անխախտ զայժմու կարգաւորութիւնսն, որով և բարեկարգութիւնն անխախտ մնացէ». (գր. առ Հիշում. Արք. 1858 Մայիս 18):

4. Հ. Ռաֆայէլի նամակէն կը տեսնուի նաեւ, որ Հ. Գրիգ. Մերճանճեան Փարիզ իրենց քովն է 1857-ին, բայց զեռ որեւէ պաշտօն մը չէ յիշատակուած այս թուականին. (գր. 1857 Յուլ. նուար 4):